

Առու Շ. Մարգարյան  
ՏԱՏ. զիս. թեկնածու

## ԱԶԳԱՅԻՆ ՆՈՐԱՍՈՒԾԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ.

զարգացման մարտահրավերների համատեքսում

### 1. Գիտությունը և տեխնոլոգիան արդի աշխարհում\*

Համաշխարհայնացման պայմաններում արդի քաղաքակրթությունն անցում է կատարում որակապես նոր մակարդակի, որի հիմքում նորագույն գիտական նվաճումների վրա խարսխված գերժամանակակից տեխնոլոգիաներն են (տեղեկատվական-հաղորդակցական, համակարգչային, կենսաբանական, լազերային, ճառագայթային, քաղանքային, օպտիկական և այլն): Այդ պատճառով, տեսարանների զգալի մասը համաշխարհայնացման հիմնական դրսերումն է համարում «նոր քաղաքակրթության և գլոբալ մտածողության ձևավորումը» կամ «համամոլորակային տնտեսական, գիտական, և տեղեկատվական դաշտի ստեղծումը»<sup>1</sup>: Մյուս կողմից, ազգային պետությունների միջև կապերի ու հարաբերությունների խորացման, սերտացման և քազմակերպացման միտումները վերածվում են զարգացող ու անցումային փուլում գտնվող երկրների տնտեսությունների կայացման ու առաջընթացի լուրջ մարտահրավերների: Ազնիայտ է դաշնում, որ գիտական ներուժի, նորագույն տեխնոլոգիաների և բարձրարդյունավետ արտադրությունների ու կապիտալի հիմնական մասը տնօրինող զարգացած արդյունաբերական երկրները աշխարհի մնացած հատվածին թելադրում են վերջիններին ոչ ձեռնորոշ վարվելակարգեր և տնտեսության կերպավոխման բնորդներ:

Այս իմաստով, համաշխարհային տնտեսության արժենիշային համակարգում կատարվող փոփոխությունները անբարենապատ ներգործություն են ունենում հատկապես հետխորհրդային նորանկախ պետությունների, այդ թվում՝ նորանկախ Հայաստանի տնտեսության վրա: Խորհրդային տնտեսաբաղաքական համակարգի փլուզումից հետո նորանկախ երկրները հնարավորություն ստացան իրենց տնտեսությունները բարեփոխելով՝ ինտեգրվել համաշխարհային տնտեսությանը: Սակայն, ինչպես ցույց են տալիս ավելի քան մեկ ու կես տասնամյակ իրա-

\* Ընդունվել է տպագրության 15. 09. 2009:

<sup>1</sup> Տես S. Տիմոֆեև, XXI դարի մարտահրավերը. Գլոբալացում, «Կառավարում» ամսագիր. 2000թ, թիւ 2, էջ 2:

կանացվող «ազատական բարեփոխումների» փորձի հիմնական արդյունքները, այդ ինտեգրումը ուղեկցվել է նորանկախ երկրների տնտեսությունների մարզինալացմամբ (լուսանցքայնացմամբ): Մեր համոզմամբ, վերափոխումների հետևանարով ավելի շուտ տեղի է ունեցել ոչ թե նորանկախ երկրների տնտեսությունների բնականոն ինտեգրում, այլ սուկ կցորդում՝ համաշխարհային տնտեսությանը, ինչի հետևանքով այդ երկրները վերածվել են զարգացած երկրների համար էներգակիրների, հանքային հումքի, որակյալ մարդկային ռեսուրսների մատակարարների: Հայաստանն այս տեսակետից, անշուշտ, բացառություն չէ, և աշխատանքի միջազգային բաժանման մեջ գլխավորապես ներկայանում է որպես հանքային հումքի (պղնձի, մոլիբդենի հանքաքար) և որակյալ մարդկային ռեսուրսների (որակյալ բանվորներ, ինժեներներ, բժիշկներ, գիտնականներ) մատակարար:

Դրանով հանդերձ, գիտության եւ առաջավոր տեխնոլոգիաների վրա հիմնված ժամանակակից քաղաքակրթությունը ներկայումս ավելի ու ավելի մեծ պրությամբ է բախվում բնական ռեսուրսների (պաշարների) սահմանափակության հիմնահարցին: Ուստի, բարձր զարգացած արդյունաբերական երկրներները ևս հարկադրված են իրենց տեխնոլոգիաներն այնպես կերպափոխել, որպեսզի նվազագույնի հասցնեն կիրառվող ավանդական ռեսուրսների (նավք, գազ, մետաղներ և այլն) ծախսումները: Այս խնդիր լուծման եղանակներից մեկն է համարվում արդեն հնացած ու շրջակա միջավայրի համար վճարակար արտադրությունների ու տեխնոլոգիաների արտահանումը երրորդ աշխարհի բույլ զարգացած, ինչպես նաև՝ անցումային փուլում գտնվող երկրներ: Արդյունքում՝ նորագույն տեխնոլոգիաների ստեղծման ու փոխանցման շուրջ ընթացող մրցապայքարը շարունակում է մնալ միջազգային տնտեսական հարաբերությունների առանցքային ուղղություններից մեկը:

18-րդ դարի Արդյունաբերական եղանակակրթությանը իրենով նշանավորեց անցումն ազրարային, կամ ինչպես ընդունված է անվանել՝ ավանդական հասարակությունից «արդյունաբերական հասարակության»<sup>2</sup>: Այդ շարժմացը, ըստ Էռլիյան, տևեց ավելի քան 200 տարի՝ պայմանավորելով համաշխարհային տնտեսության մեջ տարրեր պետությունների, ազգերի ու ժողովուրդների զրադեցրած տեղը, երանց մրցակցային ներուժն ու կարողությունները, բարեկեցության և սոցիալական ապահովության չափասահմաններն ու որոշիչները: Բարձր տեխնոլոգիաները այսօր, ըստ Էռլիյան, դարձել են միջազգային տնտեսական մրցակցության կարևորագույն որոշչներից մեկը և միաժամանակ՝ այս բնագավառում առկա ավանդական ընդունումների վերաբերման կարևոր նախապայմանը: Անցյալ դարի 60-70-ական թվականներից սկսվել ու ծավալվում է «հետարդյունաբերական հասարակության» փուլը, որը տարրեր հետազոտողների մոտ տարրեր բնորոշումներ ունի: Մասնավորապես՝ Ռ.Արոնը այն կոչում է «Վերինդրուստրիալ հասարակություն», Դ.Լիոնը՝ «Տեղեկատվական հասարակություն», Մ.Միրոշիման՝ «Էլեկտրոնային հասարակություն», Օ.Թոնֆլերը՝ «Երրորդ ալիքի քաղաքակրթություն», Ու. Բեկը՝ «ՈՒսկի հասարակություն» և այլն<sup>3</sup>:

Տեսաբանների վերնշյալ խումբը հասարակության զարգացման նոր փուլի գլխավոր ռեսուրսներն է համարում գիտելիքները և տեղեկատվությունը: Ըստ այդմ՝

<sup>2</sup> Տես Տօփլեր Յ. Տրետյա վօլնա. Ժурнал “США”, 1982г., N 7, с. 82:

<sup>3</sup> Տես նշվ. աշխ. էջ՝ 82:

քաղաքական վճիռների ու որոշումների ընդունման մեջ մեծանում է այն խմբերի կշիռն ու ազդեցությունը, որոնք տնօրինում են զարգացման որակական ռեսուրսներին: Եթե ավանդական կամ արդյունաբերական հասարակությունը ներքնապես ստատիկ էր ու զարգանում էր գլխավորապես արտաքին ազդակների ներգործությամբ, ապա հետարդյունաբերական կամ տեղեկատվական հասարակության զարգացման մեջ վճռորոշ են դառնում նրա ներքին գործոնները:

Զարգացումների այս տրամաբանությունից դուրս չէ նաև նորանկախ Հայաստանը, ուստի երբ այսօր մեր հասարակությունը կանգնած է կարևորագույն ռազմավարական այլնութանքների առջև, զարգացման ուղղության հիմնախնդիրը վճռորոշ նշանակություն է ստանում: Եվ ամբողջ հարցն այն է, թե զարգացման ո՞ր բնորդին պետք է գերապատվություն տալ, որո՞նք են հանդիսանալու Հայաստանի տնտեսության կերպավոխման ռազմավարության իրական գումարելիները:

## 2. Աղբատացնո՞ղ, թե՞ նորամուծային աճ

Այս կամ այն երկրի զարգացման վերջնական չափանիշը, ի վերջո, այդ երկրի ազգաբնակչության բարձր բարեկեցությունն է, նրա բոլոր խավերի արժանապատիվ ու ապահով կենսակերպը: Իսկ այդ պայմանների ապահովումը պայմանավորված է նրանով, թե տվյալ երկիրը ինչպիսի մասնակցություն ունի համաշխարհային տնտեսության, մասնավորապես համաշխարհային եկամտի<sup>4</sup> ձևավորման ու բաշխման մեջ: Համաշխարհային եկամտի ձևավորման և բաշխման համակարգը, այս առումով, արժեքի հավելածի, ասել է թե՝ եկամտի գոյացման, որոշակիորեն փակ շղթաների ամբողջություն է, ինչը նման է մի յուրահատուկ բուրգի: Վերջինիս կրողը հանդիսացող հիմնական բաղադրիչները վերստին առաջնակարգ կամ «բարձր» տեխնոլոգիաներն են (high-tech): Որևէ ապրանքի (այդ թվում և տեխնոլոգիայի) արտադրությունն ու վաճառքը՝ սկսած գաղափարի առաջադրումից, նախագծումից, հետազոտական-որոնողական աշխատանքներից, մինչև բուն արտադրությունը, սերտորեն առնչվում է նորամուծության հետ: Դա ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ արժեքի մեծացման կամ ավելացված արժեքի կուտակման գործընթաց:

Թեև համաշխարհային եկամտի բաշխման համակարգը ձևավորվում ու գործում է տարերայնորեն, այլուհանդերձ, մրցակցային մեխանիզմի շնորհիվ այն ենթակա է որոշակի կարգավորման: Վերջինս պայմանավորում է եկամտի բաշխման ծայրահեղ անհամաշափ բնույթը: Տվյալ հանգամանքը աշխատանքի միջազգային բաժանման ձևավորված համակարգի ածանցյալն է: Այդ իմաստով որևէ երկրի մասնաբաժնը համաշխարհային եկամտի մեջ, վերջին հաշվով, պայմանավորված է նրանով, թե ի՞նչ ապրանքներ են արտադրում այդ երկրի ընկերությունները, որքանո՞վ են վերջիններս գիտատար, ասել է թե՝ որքանո՞վ են դրանք հավելյալ արժեքներ պարունակում:

<sup>4</sup> Համաշխարհային եկամուտը միջազգայնորեն գործող միասնական վերարտարական շղթայի շրջանակներում արտադրվող ապրանքների և ծառայությունների վաճառքից գոյացող եկամուտն է՝ ի հաջիվ ավելացված արժեքի կենտրոնացման ու բաշխման:

Այս առումով համաշխարհային տնտեսությունը տեխնոլոգիաների բրգաճև աստիճանակարգ է, որի վերնամասում բարձրակարգ տեխնոլոգիաները տօնորինող փոքրարիվ հարուստ երկրներն են, իսկ բուրգի «ստորոտում»՝ վերջիններիս անցած տեխնոլոգիական «հետազօտերը» նմանակող, զարգացող և անցումային երկրների մեծամասնությունը: Միջազգային տնտեսական մրցակցությունը, ըստ էության, ընթանում է ոչ միայն զարգացած երկրների կամ առաջատար անդրագոյային ընկերությունների միջև, այլև ծավալվում է բարձրակարգ տեխնոլոգիաներ ու արտաներ արտադրող-մատակարարող երկրների՝ «տեխնոլոգիաներատորների» և այդ ապրանքներն ու տեխնոլոգիաները ընդորինակող-նմանակող-յուրացնող երկրների մեծամասնության «իմիտատորների» միջև:

Նորագոյն հետազոտությունները փաստում են, որ տեխնոլոգիական մրցակցության վերը նշված համակարգի խորացումը հանգեցնում է հարուստ և աղքատ երկրների միջև համաշխարհային եկամտի բաշխման անհամաշխափության մեծացմանը. հարուստ երկրներն «ավելի են հարստանում, իսկ աղքատները՝ աղքատանում»<sup>5</sup>: Այս համատեքստում նկատվում է եկամտի բաշխման անհավասարության խորացում նաև անցումային երկրների միջև<sup>6</sup>: Համաշխարհային եկամտի առյուծի բաժնի յուրացման հիմնան վրա պետությունների փոքրարիվ խմբի զարգացման տենապերի արագացումը և նրանց հասարակությունների բարեկեցության կտրուկ աճը՝ ի հաշիվ երկրների մեծ մասի առաջընթացի կատեցման ու նրանց գոյության պայմանների ուղղակի վատքարացման, թերևս հանդիսանում է արդի համաշխարհայնացման գլխավոր հակասությունը:

Քանի որ համաշխարհային տնտեսության անհամաշափ (ասիմետրիկ) զարգացումը հանգեցրել է առանձին երկրների միջև եկամուտների բաշխման անհավասարության մեծացմանը, շատ կարևոր է զարգացման «քոյլ քենուում» գտնվող երկրներում ներկայումս նկատվող տնտեսական աշխուժության և աճի գնահատումը՝ հաշվի առնելով ավելացված արժեքի միջազգային շղթաներին նրանց մասնակցության աստիճանը: Նման երկրներում (որոնցից են նաև Հայաստանը), բավականաշափ մեծ տնտեսական աճը ամենայն էլ չի ուղեկցվում բնակչության ճնշող մեծամասնության կենսական վիճակի թիւ թե շատ շոշափելի բարեկավմանը: Ավելի շուտ առկա է ճիշտ հակառակ պատկերը: Այն է՝ տնտեսական աճին զուգահեռ, ավելի բարեկեցիկ երկրների բնակչության կենսամակարդակի աճի տեմպերի համեմատ մեծանում է այդ երկրների հարաբերական աղքատությունը ու նաև՝ սոցիալական քենուացումը:

Պատճառն ակնհայտ է. տնտեսական աճը չի ուղեկցվում համաշխարհային եկամտից ազգային տնտեսության ունեցած մասաբաժնի գոնե համամասնական ավելացմամբ: Տնտեսական աճի այս բնորդը, որը պայմանականորեն կարելի է անվանել «աղքատացնող տնտեսական աճի» բնորդ, ի հայտ է գալիս, երբ երկրի տնտեսության մեջ զրավածությունն աճում է, բողարկումն ու արտահանումները ավելանում են, մինչդեռ, համաշխարհային եկամտի մեջ նրա մասնաբաժնը հարաբերականորեն կրճատվում է: Այսինքն, չնայած

<sup>5</sup> Steu Rodrik D. The New Global Economy and Developing Countries: Making Openness Work. Policy Essay No 24. Washington, Overseas Development Council, 1999. p. 58-63:

<sup>6</sup> Steu UNDP. Human Development Report 1999. N.Y., Oxford, Press, 1999. p. 48:

տպավորիչ տնտեսական աճին, տվյալ երկիրը համաշխարհային եկամտից հետզիեւն ավելի ու ավելի քիչ մասնաբաժին է կորզում: Նման երևոյթը դրսորփում է վերջին տասնամյակի ընթացքում շոշափելի տնտեսական աճ արձանագրած շատ երկրներում:

Փորձենք պարզել, թե ներկայումս Հայաստանը համաշխարհային եկամտից որքա՞ն մասնաբաժին-եկամուտ է ստանում, ասենք՝ իր մշակած քանիկարժեք քարերի, աղամանդեների, մոլիբդենի կամ կոնյակի արտահանումներից և ինչպիսի՞ն է այդ եկամուտների աճի ոյնամիկան: Դրանց վերաբերող պաշտոնական տվյալները տիսուր պատկեր են ներկայացնում: Այն է՝ շահույթներ չկան կամ գրեթե չկան: Խհարկե, այստեղ որոշակի դեր է խաղում ստվերում գոյացող և յուրացվող շահույթների առկայության հանգամանքը, սակայն, մեծ հաշվով, այդ արտադրությունները շատ քիչ առնչություն ունեն ավելացված արժեքի միջազգային շղթաների և համաշխարհային եկամտի բաշխման հետ:

Ուստի, կարծում ենք, որ Հայաստանի համար «աղբատացնող տնտեսական աճի» սպառնալիքները կչեզոքացվեն միայն այն դեպքում, եթե միջնաժամկետ հեռանկարում անցում կատարվի զիտուրյան նվաճումների և քարձր տեխնոլոգիաների վրա հիմնված՝ զարգացման նորամուծային (ինովացիոն) բնորդին: Այդ ընթացքը ենթադրում է առաջին հերթին՝ քաղաքական և ինստիտուցիոնալ ինտեգրում համաշխարհային տնտեսության զարգացման ուղենիքը որոշող առանցքային տնտեսաքաղաքական համակարգերին և խհարկե՝ հավելյալ արժեքի միջազգային վերարտադրական շղթաներին:

Նշված իրողությունները հարկադրում են խոսել գլոբալ տնտեսության մեջ մեր երկրի մրցակցային դիրքերի հաստատման կամ ավելի ստույգ՝ ռազմավարական դիրքավորման անհրաժեշտության մասին: Այս գերխնդիրի իրականացումը վերստին ենթադրում է «վերականգնողական» տնտեսությունից անցում «նորամուծային» (ինովացիոն) տիպի տնտեսության: Համաշխարհայնացման պայմաններում ավելացված արժեքի արտադրությունը ավելի ու ավելի մեծ չափերով կենտրոնանում է այն միջազգային վերարտադրական շղթաներում, որոնք օժտված են յուրահատուկ տեխնոլոգիական, մարքետինգային և կառավարչական գիտելիքների հավաքակազմով: Հենց այդ օրականերն են ապահովում գիտելիքների «արտադրության» և տարածման հատվածի՝ «նոր տնտեսության» և տնտեսության ավանդական հատվածների միջև օրգանական կապը:

Ուրեմն՝ ավելի քոյլ և աղբատ երկրների համար ներկայումս հիմնական խնդիրը ոչ միայն (և ո՛չ այնքան) համաշխարհային տնտեսությանը ամեն գնուվ ինտեգրվելն է, այլ վերջինիս այնպիսի տարրերակի ընտրությունը, ինչը կապահովի բրանցից յուրաքանչյուրի բնակչության եկամուտների կայուն աճը: Այլ կերպ, անցումային երկրների, այդ քվում՝ Հայաստանի համար, ընդունելի պետք է դիտվի ինտեգրման այնպիսի տարրերակը, որը կապահովի բնակչության կենսամակարդակի անշեղ աճը՝ ի հաշիվ համաշխարհային եկամտից ավելի ու ավելի մեծ մասնաբաժին կորզելու: Հակառակ պարագայում համաշխարհայնացման ազդեցությունը բացասական կլինի, քանզի հումքային կամ մարդկային կցորդի վերածվելու հավանականությունը կմեծանա:

### 3. Ազգային նորամուծային համակարգը որդես գարգացման ու մրցունակության հիմնատար

Կարելի է պնդել, որ տնտեսության գարգացման և աշխատանքի արտադրողականության բարձրացման մեջ գիտական և տեխնոլոգիական գործոնների ազդեցության հարցում 1930-70-ական թվականներին տիրապեսող էին համանման տնտեսական-մեթոդաբական ելակետեր: Դրանց բնորոշ էր տեխնոլոգիական զարգացման գծային-պատճառական (դետերմինիստական) մոտեցումը, համաձայն որի, ինչպես առանձին ընկերության, այնպիս էլ ազգային տնտեսության գարգացումն ու մրցունակությունը պայմանավորված է տեխնոլոգիական գիտելիքի ստեղծման ու առաջինացման (ներդրման) գծային բնույթ ունեցող գործընթացի հաջողությամբ: Համաձայն այդ մեթոդաբանական նոտեցման, ազգային տնտեսության տեխնոլոգիական զարգացումը պայմանավորված է «գիտություն-տեխնիկա-տեխնոլոգիա-արտադրություն» շղայի կառուցմանը: Այս առումով տիրապետող էր այն համոզմունքը, որ տեխնոլոգիական նորարարությունը գործընթաց է, որին պետք է նախորդի սկզբում հիմնարար, իսկ այնուհետև կիրառական գիտելիքի ստեղծումը:

Այդօրինակ խնդրադրումը, թերևս, ինչ-որ տեղ տրամաբանական էր ու արդարացված, եթե հաշվի առնենք, որ գիտության և տեխնոլոգիայի առաջավոր նվաճումների օգտագործումը տնտեսության մեջ հատվածական ու ընդհատ բնույթ էր կրում: Ընդ որում՝ խոչոր գիտական և տեխնոլոգիական հայտնագործությունների ստեղծման ու դրանց առարկայացման-նյութականացման միջև եղած ժամանակի տևողությունը բավականին երկար էր:

Նկատենք նաև, որ տեխնոլոգիական զարգացման գծային-դետերմինիստական մոտեցման հիմքում ընկած էին այդ ժամանակաշրջանում տիրապետող երկու հիմնական տեսական ուղղությունների՝ նոր դասականության և քեյնսյան ուղմունքների տեսական դրույթները: Նրանք ամբողջության մեջ պնդում են, որ տեխնոլոգիան և գիտելիքները տնտեսական աճի նկատմամբ արտաքին (էկզոպեն) գործուներ են և տնտեսական համակարգը իր շարժիչ ուժի՝ մրցակցության մեխանիզմի միջոցով լրացնելու մեջ պարտադրում է կիրառել տեխնոլոգիական նորամուծությունները: Այդ ելակետից էլ բխեցվում էր, որ գիտատեխնոլոգիական առաջադիմությունը «գիտություն-տեխնիկա-տեխնոլոգիա-արտադրություն» շղայում ինքնարերարար տեղի ունեցող ու ինչ-որ տեղ՝ երաշխավորված գործընթաց է: Սակայն, անցյալ դարի 70-80-ական թվականներից, երբ էապես արագացան գիտատեխնիկական առաջադիմության տեմպերը, և տեխնոլոգիական նորարարության գործունը վերածվեց զարգացած երկրների տնտեսությունների տնտեսական աճի ու մրցունակության զիջոցի, ակնհայտ դարձավ, որ տնտեսության հետ գիտության և տեխնոլոգիայի փոխհարաբերությունների խնդիրը ավելի համակարգված ու համալիր մոտեցում է պահանջում թե՝ տեսական-մեթոդաբանական ապահովման և թե՝ գործնական քաղաքականության տեսանկյունից: Թերևս, այդ շրջանում էր, որ շրջանառության մեջ դրվեց Ազգային նորամուծային համակարգի (այսուհետև՝ ԱՆՀ) ստեղծման ու զարգացման հիմնադրույթը:

ԱՆՀ-ի գաղափարը առաջինը գործածել է Ք. Ֆրիմենը՝ ուսումնասիրելով Շապոնիայի տնտեսական համակարգի և տեխնոլոգիական քաղաքականության փոխհարաբերության խնդիրը: Ըստ այդ մոտեցման՝ ԱՆՀ-ն ազգային մակարդակով փոխ-

ներգործող ինստիտուտների և կազմակերպությունների բարդ համակարգ է, որը մասնակցում է հասարակության կողմից սպառվող նոր գիտելիքների, տեխնոլոգիաների, ապրանքների և ծառայությունների ստեղծմանը, ձևափոխմանը և տարածմանը<sup>7</sup>: ԱՆՀ-ի մեկ այլ տեսարան Ս.Մերքարֆի բնորոշմամբ՝ «ԱՆՀ-ն տարբեր ինստիտուտների համակցություն է, որոնցից յուրաքանչյուրն առանձին, բայց միաժամանակ՝ համատեղ, մասնակցում են նոր տեխնոլոգիաների ստեղծմանը՝ ձևափորելով այս հիմքը, որը կառավարություններին բռնույթ է տալիս ազել նորարարական գործընթացի վրա: Այդ ցանցում ստեղծվում, համակարգվում և փոխանակվում է գիտելիքի և հնարքության համադրության արդյունքը, ինչը բնորագրվում է որպես նոր տեխնոլոգիա»<sup>8</sup>:

Ժամանակակից էվոլյուցիոն տնտեսագիտական դպրոցի տեսարան Ո. Նելսոն ԱՆՀ-ն բնորագրում է որպես «ինստիտուտների ամբողջություն, որոնց փոխազդեցությամբ է որոշվում ազգային ֆիրմաների նորարարական ներկայացումը»<sup>9</sup>:

Այսպիսով, տեսարանների զգայի մասի նոր ներկայումս տիրապետող է այն համոզունքը, համաձայն որի, նոր գիտելիքների ստեղծման հիման վրա մրցունակ տեխնոլոգիական մշակումների գործընթացները կարող են հաջողակ լինել միայն համապատասխան ինստիտուցիոնալ ենթակառուցվածքների և արդյունավետ պետական քաղաքականության միջոցով: Այդ պատճառով գործնականում նորամուծական համակարգերը դիտարկվում են տարբեր մակարդակների վրա: Դրանք ներառում են ինչպես առանձին ընկերությունները կամ նրանց խումբը, այնպես էլ ազգային և միջազգային մակարդակները: Դրանով հանդերձ, տեսարաններից շատերը առավել նախընտրելի են համարում նորամուծային համակարգերի դիտարկումը ազգային մակարդակով: Նման մոտեցումը հնարավոր է դարձնում տվյալ երկրի տնտեսության զարգացման գլխավոր որոշիչների ու տեխնոլոգիական առաջնահերթությունների սահմանումն ու առանձնացումն:

Բոլոր դեպքերում, գիտատեխնիկական առաջախմության ժամանակակից տեսարաններն ու այդ բնագավառին առնչվող գործարար կառույցներն այսօր առավելապես հակված են նորամուծությունների արդյունավետ գործընթացը դիտարկելու ոչ քեզ գծային-շղթայական, այլ այսպես կոչված՝ «ցանցային բնորդի» գործողության շրջանակներում: Այս բնորդը ենթադրում է նոր տեխնոլոգիաների առաջացման ու ներդրման այնախիս սխեմա, որտեղ գիտելիքների ստեղծման ու նորամուծությունների շղթայով դրանց առաջնադաշտան-նյութականացման հաջողությունը պայմանավորված է ինստիտուցիոնալ պայմաններով ու միջազգային գործոններով: Ավելին, նորամուծային գործընթացի «ցանցային բնորդը» ենթադրում է, որ նոր տեխնոլոգիաներ կամ, ընդհանրապես, «նոր կոմքինացիաներ» կարող են ձևավորվել գիտությունից մինչև վերջնական ներդրում առաջանցիկ շղթայի ցանկացած փուլում, եթե առկա են դրան բարենպատող ինստիտուցիոնալ պայմանները (օրենսդրություն, մակրոտեսական միջավայրը ու կարգավորման մեխանիզմներ, քաղաքական, էքո-մշակութային կամ հոգեբանական գործոններ, նորարարության ավանդույթներ և այլն):

<sup>7</sup> Stu Freeman C. Technology Policy and Economic Performance. L.: Printer Publishers, 1987, p. 18.

<sup>8</sup> Stu Metcalfe S. The Economic Foundation of Technology Policy: Ecvilibrium and Evolutionary Perspective // Handbook of the Economics of Innovation and Technical Change / P. Stoneman (ed.). L.: Blackwell, 1995.

<sup>9</sup> Stu R.Nelson. "National Innovation Systems: A Comparative Analysis". Oxford University Press. 1993. p.13.

Միաժամանակ, պետք է նկատել, որ ժամանակից շուտ ազգային տնտեսության վերակողմնորոշումը դեպի ինովացիոն զարգացման ուղի թերզարգացած ինստիտուցիոնալ ենթակառուցվածքների պայմաններում կարող է հանգեցնել սահմանափակ ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործման ու դրանց փոշիացման, քանզի գործունակ և միջազգային չափանիշներին համապատասխան ԱՆՀ-ի ձևավորումը հսկայածավալ ռեսուրսներ, ինչպես նաև տնտեսական ժամանակ պահանջող գործընթաց է: Այդ պատճառով, թերևս, շատ ավելի ճշշտ կլինի զարգացման առաջին փուլում ԱՆՀ ինստիտուցիոնալ ենթակառուցվածքների ձևավորմանը գուզահետ, իրականացնել այսպես կոչված «հետապնդող արդիականացման» քաղաքականություն՝ հիմնված զարգացած երկրներից նորագույն գիտելիքների և տեխնոլոգիաների փոխանցման վրա: Զարգացման նման սցենարի դեպքում նպատակներն ավելի հստակ են ձևակերպվում ու կապակցվում առկա ռեսուրսներին: Մեր համոգմանը, այս առումով, նախկին ԽՍՀՄ տարածքի պետությունները, այդ բվում՝ Հայաստանը, արդիականացման խնդիրները լուծելիս զարգացած երկրների նկատմամբ ներկայում ունեն որոշակի առավելություն: Այն է՝ զարգացած երկրների կառավարման փորձի, ինստիտուտների և քարձրակարգ տեխնոլոգիաների փոխառման հնարավորություն՝ շատ ավելի նվազ ծախսերով, քան զարգացած երկրները կատարել են դրանց ստեղծման ընթացքում: Դա, անշուշտ, չի նշանակում, որ չպետք է իրականացնել հենքային նորամուծություններ այն ոլորտներում, որոնցում նման հնարավորությունները (կուտակված գիտելիքներ, կադրեր, փորձ, ավանդույթներ և այլն) առկա են:

Հայաստանի պարագայում, անշուշտ, նման ոլորտներ կարող են լինել միջուկային ֆիզիկայի, կենսաբանական, լազերային, դեղագործական, բժշկագիտական տեխնոլոգիաներին առնչվող նորարարության բնագավառները: Այս բնագավառներում պետությունը կարող է օժանդակել փնջակապային (քլաստերային) զարգացմանը: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է հիշել, որ նորագույն տեխնոլոգիաները չափազանց թանկ են, ոիսկային ու համապատասխան ինստիտուցիոնալ պայմանների բացակայության դեպքում ավելի քիչ ծախս է պահանջում դրանց փոխառումը, քան ստեղծումը՝ սեփական ռեսուրսների հիման վրա:

#### 4. Գիտաեխնոլոգիական բնագավառի ժառանգությունը

Ծշմարտությունը պահանջում է ասել, որ ՀՀ գիտատեխնոլոգիական ներուժի զգալի մասը մաշվել-քայլքայվել է առաջին երրորմ՝ ոչ խելամիտ ազատական քարեփոխումների հետևանքով: Մեծ մասամբ դրանք իրականացվել են առանց երկարաժամկետ նպատակադրությունների՝ անտեսելով տնտեսությունը նորամուծային ռեժիմի փոխարելու պահանջները: Այս տեսանկյունից, թերևս, հայկական գիտատեխնոլոգիական ոլորտի նկատմամբ լիովին կիրառելի է INTAS-ի<sup>10</sup> փորձագետ Դ.Քերգերի այն պնդումը, ըստ որի «անցումային երկրներում առկա գիտությունն ու տեխնոլոգիաները ոչ թե ընկնող տնտեսությունն են մղում դեպի վեր, այլ ճիշտ հակառա-

<sup>10</sup> INTAS-ը նախկին ԽՍՀՄ հանրապետությունների գիտականների հետազոտական ծրագրերի ֆինանսավորում իրականացնող կառույց է, որը հիմնվել է Եվրոպական միության կողմից 1993 թ.: 1993-2006 թթ INTAS-ի բյուջեն կազմել է 293,1 միլիոն Եվրո:

կը՝ ընկնող տնտեսությունը դեպի ներքև է ձգում գիտության և տեխնոլոգիաների բնագավառները»<sup>11</sup>:

Փաստը մնում է փաստ, որ Հայաստանի գիտության ոլորտում գրադաժների թվաքանակը մինչանկախական ժամանակաշրջանի համեմատությամբ բազմապատիկ անգամ կրծատվել է: 1980-ական թվականների վերջի համեմատ գիտության ոլորտի աշխատողների թիվը կրծատվել է ավելի քան հինգ անգամ<sup>12</sup>: Ընդ որում տեղի է ունեցել ինչպես հետազոտողների թվաքանակի բազմակի կրծատում՝ ավելի քան 3 անգամ, այնպես էլ գիտական աշխատանք կատարող օժանդակ անձնակազմի ավելի մեծ չափերով կրծատում, որոշ գնահատումներով՝ շուրջ 10 անգամ<sup>13</sup>: Անկախության առաջին խոկ տարիներից պարզ էր, որ գիտության և տեխնոլոգիական հետազոտությունների կազմակերպման հնացած ու ժամանակի քննությունը չընող խորհրդային համակարգը նոր պայմաններում պետք է լրջորեն բարեփոխվի ու հարմարեցվի նորանկախ երկրի իրական կարիքներին ու հնարավորություններին, ու որքան շուտ՝ այնքան լավ, քանզի կորուստները և ցնցումները այդ դեպքում ավելի քիչ կլինեին: Հետխորհրդային այն երկրները, որոնք կարողացան արագ յուրացնել այս պարզ ճշնարտությունը ու համիմաստ քայլեր ձեռնարկել, գիտատեխնոլոգիական բնագավառի բարեփոխումների խնդիրները սկսեցին լուծել ինովացիոն ու մրցունակ տնտեսության ձևավորման համալիր բարեփոխումների ենթատեքատում:

Գիտության ոլորտի բարեփոխման ու զարգացման խնդիրները ԱՆՀ ձևավորման ենթատեքատում դիտարկելու փորձագիտական առաջարկները, թերևս, հիմնված են իրավիճակի և հնարավորությունների ողջամիտ ու սրափ գնահատականների և ինչու չէ՝ միջազգային փորձի համակողմանի հաշվառման վրա: Այսօր այլևս հիմնավոր չեն այն պնդումները, թե որևէ երկրում գիտության և տեխնոլոգիայի զարգացման զիսավոր պայմանը ոչ միայն ոչ այնքան ներքին կարիքներն են, որքան համաշխարհային գիտության և տնտեսության պահանջները: Սա ավելի շուտ կեղծ պատվախնդրություններից բխող բարի ցանկություն է:

Չժամանակակի կարևոր գործուների նշանակությունը, այդուհանդերձ, պետք է ընդունել, որ այս կամ այն երկիրը, կենտրոնացված աղբյուններից ահռելի ուսուլումներ ծախսելով, ծառում է զարգացնել իր նորանուժային ներուժը՝ առաջին հերթին նպատակ ունենալով զարգացնել մրցունակության և արտադրողականության ազգային համակարգի կարողությունները, որոնք սեփական ժողովրդի կենսամակարդակի ու բարեկեցության բարձրացման գրավականներն են: Ակնհայտ է, որ այն երկրները, որտեղ գիտության զարգացումը կտրված է տնտեսության իրական պահանջներից ու հնարավորություններից, ի վերջո, դառնում են ավելի զարգացած երկրներին որակյալ մարդկային ռեսուրսներ՝ «ուղեղներ», տնտեսագետի լեզվով ասած՝ «ուղամավարական ռենտա» մատակարարող արդյունքներ: Սույն օտար երկրներին մտավոր գործունեության արդյունքներ մատակարարող երկրի գիտության և տեխնոլոգիական զարգացման բնորդը, որը կտրված է ազգային տնտեսության իրա-

<sup>11</sup> Steu Daniel Berger, "The Russian Science & Technology Sector: Quo Vadis?", unpublished manuscript, November 2000. <http://www.opec.ru>.

<sup>12</sup> Steu Հայաստանի վիճակագրական տարեգիրք (1999, 2000), ՀՀ ԱՎԾ, 2001, էջ 118:

<sup>13</sup> Steu նույն տեղում:

կան կարիքներից ու չի ծառայում նրա մրցունակության աստիճանի բարձրացման գերխնդրին, երկարաժամկետ առումով անկենառնակ է ու դատապարտված:

Որևէ երկրի տնտեսական անվտանգության գնահատման հարցում փորձագետները առանձնացնում են որոշակի ցուցանիշներ, որոնք, շեմային մեծությունները գերազանցելու դեպքում, կարող են սպառնալիքներ ստեղծել: Մասնավորապես, Վ.Սենչագովի գնահատումներով, ազգային տնտեսական անվտանգության համակարգը նկարագրող 19 ցուցանիշների մեջ երկուսը վերաբերում է գիտատեխնոլոգիական ոլորտին: Դրանք են ա. պետական բյուջեից գիտության վրա կատարված ծախսերի մասնաբաժինը, և բ. արդյունաբերական արտադրանքի ծավալի մեջ գիտատար արտադրանքի տեսակարար կշիռը: Ըստ այդ ուսումնասիրության, տնտեսական անվտանգության սպառնալիքներ են ստեղծվում, եթե պետական բյուջեից գիտությանը միջոցների մասնաբաժինը ավելի նվազ է ընդհանուր ծախսերի 1,5 տոկոսից<sup>14</sup>: Եթե այս չափանիշով գնահատելու լինենք, ապա գիտության վրա կատարված ծախսերի առումով ՀՀ տնտեսությունը վերջին տասնամյակում գտնվել է (ու շարունակում է գտնվել) վտանգավոր գոտում, քանզի 1991-2009 թթ. գիտության բնագավառին կատարված հատկացումները յուրաքանչյուր տարի չեն գերազանցել ՀՀ պետական բյուջեի ծախսերի 1 տոկոսը:

## 5. Նորարարական ներուժի քոյլ իրացման դաշտառները

Հայաստանը նախկին ԽՍՀՄ այն փորրաթիվ հանրապետություններից էր, որի գիտական, հետազոտական ու տեխնոլոգիական կարողությունների վրա էր հենվում նախկին միության կուսակցական դեկավարությունը՝ նորագույն տեխնոլոգիաների ստեղծման ու ներդրման լայնամասշտար ծրագրեր մշակելու և իրականացնելու ընթացքում: ԽՍՀՄ գոյության ընթացքում Հայաստանում ստեղծվել էր պատկանելի գիտահետազոտական, փորձարարական բազա, գիտակրթական հաստատությունների լայն ցանց, տեխնոլոգիական ենթակառուցվածքներ ու համապատասխան կապեր:

ԽՍՀՄ-ի վլուգմանը հաջորդած անկանոն ու քառային զարգացումները, ինչպես նաև դրանց հաջորդած ազատական բարեփոխումները ուղղակի կարվածահար արեցին Հայաստանի գիտական և տեխնոլոգիական ենթակառուցվածքները: Ուստի այժմ, փաստորեն, խոսք չի կարող լինել մրցունակ նորամուծական համակարգի մասին, թեև դեռևս առկա է մեծ ներուժ: Այսպես թե այնպես, երկրի զարգացած գիտատեխնիկական և նորարարական ներուժի ու նրա իրացման ցածր մակարդակի միջև խօսումը պետք է բացատրել չորս խորոշ պատճառներով.

1. Կայունացմանն առնչվող գործոններ,
2. մրցակցային միջավայրի ձևավորման հետ կապված գործոններ,
3. ինստիտուցիոնալ գործոններ,
4. կառավարման հետ կապված գործոններ:

Թվարկված խմբերից յուրաքանչյուրը, իր հերթին, մի շաբթ խնդիրների չլուծվածության կամ կիսատ լուծման արգասիք է, ինչը ենթադրում է որոշակի պարզա-

<sup>14</sup> Տե՛ս Բ. Սենչագով. Экономическая безопасность как основа обеспечения национальной безопасности России. Журнал «Вопросы Экономики». 2001. N. 7. с. 76:

բանում: Ուստի հարկ կա դրանցից յուրաքանչյուրը դիտարկել նախ՝ առանձին, ապա՝ միմյանց հետ կապի ու փոխպայմանավորվածության մեջ:

Կայունացմանն առնչվող գործոնները. քաղաքական, տնտեսական (ներառյալ՝ ֆինանսական և իրավական) կայունացումը լայն իմաստով նպատակ ուներ ավելացնել նորարական գործընթացի կանխատեսելիության աստիճանը, ինչպես նաև՝ նվազեցնել այդ բնագավառում ներդրումների ռիսկը: Այս առումով Հայաստանի տնտեսության արդիականացման գլխավոր խոչընդոտը հանդիսանում է տեխնոլոգիական հետամնաց և անճցունակ արդյունաբերությունը: Այն միջոցները, որոնք այսօր գործադրվում են ֆինանսական և տեխնոլոգիական առումով անկենասունակ ձեռնարկությունների ֆինանսական առողջացման նպատակով, բացահայտորեն անրավարար են: Կայունացման քաղաքականության բնագավառի հետ կապված մյուս խնդրահարույց հարցերը, որոնք դեռևս օրակարգում են, կարելի է ներկայացնել հետևյալ շարքով.

- օրենքների կիրառման խիստ ցածր մակարդակը,
- կապիտալի արտահոսքը,
- գնողունակության համարժեքի և արտարժույթի շուկայական գնի միջև մեծ խզումը,
- տևական առումով բարձր տոկոսադրույթների և ցածր սղածի անհամապատասխանությունը,
- կոռուպցիայի, հետևաբար և՝ գործարքային (տրանսակցիոն) ծախսերի շատ բարձր աստիճանը, ինչը առաջին հերթին հետևանք է այն բանի, որ դեռևս սեփականությունն ու բիզնեսը չեն տարանջատվել իշխանությունից,
- բանկային համակարգի նկատմամբ անվտանությունը, և իրու հետևանք՝ ազգային խնայողությունները արտադրական ներդրումների վերածելու անրավարար ձավալները:

Մրցակցային միջավայրի ձևավորման հետ կապված գործոններ. թեև չենք կարող արձանագրել, որ անցած տարիներին իրականացված բարեփոխումների արդյունքում արվել են քայլեր, որոնք նպաստել են առողջ մրցակցային միջավայրի ձևավորմանը, սակայն դեռևս շրջակած խնդիրներից կարելի է մատնանշել.

- տնտեսական խաղի կանոնները լիարժեք չեն ու բոլոր մասնակիցների համար՝ ոչ միատեսակ,
- իշխանությունը չեզոք չէ բիզնեսի նկատմամբ, շատ դեպքերում իրականացնում է շահագրգիռ և սուբյեկտիվ միջամտություններ,
- տնտեսության զգալի հատվածը գտնվում է ստվերում, ինչի հետևանքով օրինական հարկատուները, հավելյալ ծախսեր կրելով, ի վիճակի չեն նորամուծություններ կատարել, իսկ ահա անօրինական դաշտում գործող տնտեսվարողների համար թուլանում են նորամուծություններ կատարելու խթանները,
- պահպանվում է տնտեսության խնդիրականական (օլիգոպոլիստական) բնույթը,
- հաճախ շուկաներ մտնելու, մրցույթներին մասնակցելու, արտոնություններ կամ էժան վարկեր ստանալու վերաբերյալ որոշումները կայացվում են ոչ թե հայտառուի գործարար հատկանիշների, այլ իշխանական համակարգում առկա հովանավորի քաղաքական կշռի ու ազդեցության իման վրա,
- հայաստանյան ընկերությունների՝ արտաքին շուկաների մրցակցության պայմաններում աշխատելու անկարողությունը,

- շուկայական հարաբերությունների քրեականացման բարձր մակարդակը և այլն:

Ինստիտուցիոնալ գործոնները ինստիտուցիոնալությունը ապահովում է նորամուծությունների իրավաօրենսդրական հիմքը, հեշտացնում է անհրաժեշտ տեղեկատվական և կազմակերպական փոխներգործությունները, նվազեցնում է գործառնական ծախսերը, բարձրացնում է գործարքների արդյունավետությունն ու որակը: Այս տեսանկյունից հիմնական չլուծված խնդիրներն են.

- ֆոնդային շուկայի թերզարգացման համար կամ փաստացի բացակայությունը,
- բանկերի նկատմամբ վստահության պակասը,
- ներդրումների և սեփականության թույլ պաշտպանվածությունը,
- ներդրումային ռիսկերի թույլ ապահովագրությունը,
- նորարարական գործունեության իրավական կարգավորման ցածր որակը,
- նորարարական գործունեության սուբյեկտների տեղեկատվական-խորհրդատվական համակարգի ցածր մակարդակը,
- մտավոր սեփականության օբյեկտների շրջանառության ցածր մակարդակը և այլն:

Կառավարման հետ կապված գործոններ. կառավարման համակարգը նորարարական գործընթացին ռացիոնալ ուղղվածություն և սոցիալական նշանակություն է հաղորդում, մեծացնում է նորարարության բնագավառում կոռպարագիայի աստիճանը: Կառավարման համակարգի հիմնական թերությունը մարդկային գործոնի թերագնահատումն է: ՀՀ կառավարությունը հիմնականում զբաղված է եղել տնտեսության ախտանիշային հիվանդությունների բուժմամբ՝ առանց ունենալու տնտեսության զարգացման երկարաժամկետ ուղղմանը:

Այս ամենից ելնելով, ի վերջո, կարելի է արձանագրել, որ ՀՀ գիտական և նորարարական ներուժը, չնայած ցածր աշխատավարձերին ու շահույթներին, շարունակում է լինել տպավորիչ: Գիտությամբ և բարձր տեխնոլոգիաներով զբաղված մարդիկ այս պայմաններում անզամ շարունակում են զբաղվել նորարարությամբ: Սակայն, այս իրավիճակը երկար շարունակվել չի կարող, քանի որ նման շարժառիթներով առաջնորդվող մարդիկ ծերանում են և շարքից դուրս գալիս, իսկ նրանց փոխարիննանը կոչված երիտասարդությունը համաձայն չէ ցածր եկամուտներ ստանալու պայմանով զբաղվել գիտությամբ:

Հիմնական եզրակացությունն այն է, որ կառավարությունը բարեփոխումների քաղաքականություն իրագործելիս պետք է առաջնորդվի ոչ թե բարեփոխական գործողությունների պարզ հավաքածու կյանքի կոչելով, այլ երկրի տնտեսությունը զարգացման նորամուծային ռեժիմի փոխադրելու անհրաժեշտությամբ, առանց որի անհմաստ է խոսել երկրի բնակչության արժանապատիվ կյանքի և բարձր բարեկեցության ապահովման մասին:

## 6. Տեխնոլոգիական արդիականացման տարերակները

Փաստենք, որ անկախության տարիներին Հայաստանում իրականացված ինստիտուցիոնալ և մակրոտնտեսական բարեփոխումները, թեև ձեռնարկատիրության համար նվազագույն տանելի պայմաններ են ստեղծել, սակայն ասել, թե դրանք բավարար են տնտեսության նորացման, մասնավորապես՝ արդյունավերա-

կան ձեռնարկությունների գանգվածային արդիականացման համար, թերևս տեղին չէ: Ավելի քան ակնհայտ է, որ ազատական շուկան ի գորու չէ լուծել համակարգային տեխնոլոգիական կերպավոխսման, կամ ինչպես ընդունված է ասել՝ «տեխնոլոգիական փոխանցման» խնդիրը: Ուրեմն ստեղծված իրավիճակում առնվազն միամստորյուն կլինի հույս ունենալ, թե ինչ-որ իրաշքով հասարակության բարեկեցության մեջ թոշջը տեղի կունենա:

Ակնհայտ է նաև, որ մեր ընկերություններում հազվադեպ հանդիպող նորամուծությունները պատահական ու անկազմակերպ բնույթ ունեն և հիմնված են նրանց կառավարիչների կամ սեփականատերերի սուբյեկտիվ ընկալումների ու պատկերացումների վրա: Նման սուբյեկտիվ ընկալման արդյունքում, առանց լուրջ շուկայագիտական հետազոտությունների, առանց նոր արտադրանքի շուկայական ներածման ռազմավարության հնարավոր է, որ առկա ռեսուրսներն ամրողությամբ վերաբաշխվեն հօգուտ այն նախագծի, որի հաջող ելքը կասկածահարույց է: Պատճառն այն է, որ տվյալ նորամուծությունը հիմնված չէ երկրի տնտեսական զարգացման ռազմավարության վրա, ինչը խիստ մեծացնում է նրանում կատարվող ներդրումների ռիսկի աստիճանը:

Հատկանշական է, որ ՀՀ վերջին մի քանի կառավարությունները իրենց գործունեության ծրագրերում ԱՆՀՀ ձևավորման առաջադրանքը ձևականորեն արտացոլել են որպես օրակարգային խնդիր: Ավելին, ՀՀ Ազգային Ժողովը ընդունել է նորամուծությունների ներդրմանը նպաստող մի շարք օրենքներ<sup>15</sup>, իր հերքին՝ ՀՀ կառավարությունը ընդունել է նորամուծությունների (ինովացիոն) ոլորտին վերաբերող մի շարք որոշումներ<sup>16</sup>, հյաեցակարգեր, որոնց նպատակը խնդրու առարկա բնագավառի զարգացումն է: Սակայն, որքանո՞վ են այդ օրենքներն ու որոշումները համահունչ Հայաստանում ստեղծված վիճակին ու ամենակարևորը՝ որքանո՞վ են կիրառելի:

Նախ՝ «Ինովացիոն գործունեության պետական աջակցության մասին» 2006 թվականին ընդունված ու նույն տարում էլ գործողության մեջ դրված օրենքը, կարելի է ասել՝ գործում է միայն բորբոքած վրա: Այդ օրենքը պահանջում է, որպեսզի յուրաքանչյուր տարրա պետական բյուջեում առանձին տողով նախատեսվի այն գումարը, որն ուղղվելու է նորամուծական ծրագրերի ֆինանսավորմանը կամ համաֆինանսավորմանը: Այդ օրենքի ընդունումից հետո առնվազն չորս ՀՀ տարեկան բյուջե է ընդունվել, բայց դրանցից և ոչ մեկում նման ծրագիր կամ ֆինանսավորում չի նախատեսվել: Խնդիրը միայն այն չէ, որ մեր բյուջեի հնարավորություններն են սահմանափակ, այլ նրանում, որ նորամուծական ոլորտը օրվա իշխանության կողմից շարունակում է ընկալվել որպես հեռանկար չունեցող ու ֆինանսավորման տեսակետից ոչ առաջնային բնագավառ: Մեկ այլ փաստ. թեև վերոհիշյալ օրենքը պետական նորամուծային քաղաքականության հիմնական ուղղություններից է համարում վենչուրային (ոխսային) հիմնադրամների ստեղծման աջակցությունը, սակայն առ այսօր նման հիմնադրամների ստեղծումը արտոնող ու նրանց գործունեությունը կանոնակարգող օրենք Ազգային Ժողովը դեռ չի ընդունել: Ինչ վերաբե-

<sup>15</sup> Տես ՀՀ օրենքը «Ինովացիոն գործունեության պետական աջակցության մասին», ընդունված 2006 թ. մայիսի 23-ին:

<sup>16</sup> Տես «ՀՀ -ում Ինովացիոն գործունեության հյաեցակարգ»: ՀՀ կառավարության 2005թ. հունվարի 20-ի նախարար արձանագրային որոշում: «ՀՀ -ում Ինովացիոն համակարգի ձևակիրման 2005-2010 թթ. ծրագրի մասին»: ՀՀ կառավարության որոշում, 28 սեպտեմբերի 2005 N 1729 -Ն: «Ինովացիոն ոլորտի գերավառ ուղղությունները սահմանելու մասին»: ՀՀ կառավարության որոշում, 19 հոկտեմբերի 2006, N 1466 -Ն:

րում է ՀՀ կառավարության ընդունած համապատասխան որոշումներին ու հայեցակարգերին, ապա դրանք առաջմ գրու հօչակագրային բնույթ ունեն և հիմնականում քաղաքական-այսրոպեական նպատակներ են հետապնդում և ապահոված չեն համապատասխան ֆինանսական ռեսուրսներով ու ժրագրերով:

Զարգացած երկրներում, որպես կանոն, արդյունաբերական արտադրության աճի 75-ից մինչև 100 տոկոսը ստացվում է հենց նորամուծությունների ներդրման հաշվին<sup>17</sup>: Նորամուծությունների որոշիչ նշանակությունը դրսնորփում է ոչ միայն զարգացած, այլև համակարգափոխության փուլում գտնվող երկրներում, քանզի կառուցվածքային ճգնաժամ ապրող նրանց տնտեսությունները կարող են դառնալ մրցունակ միայն հենքային տեխնոլոգիաների հիմնան վրա արդիականացման ճանապարհով: Այս առումով, նորանկախ Հայաստանի տնտեսությունը բացառություն չէ: Ավելին, հիմնային ռեսուրսներից և էներգակիրներից գորկ երկրի պայմաններում խնդրի այսպիսի լուծումը առավել նախընտրելի է: Դա պահանջում է տնտեսությունն ամբողջությամբ փոխադրել, եթե կարելի է այսպես ասել՝ զանգվածային նորամուծությունների ռեժիմի: Սիայն այդ պարագայում կարելի է հույս ունենալ, որ առաջիկա 8-10 տարիների ընթացքում հնարավոր կլինի կենսամակարդակի շոշափելի աճ ապահովել: Սա պահանջում է առնվազն 4-5 անգամ ավելացնել երկրի ՀՆԱ-ն (Համախառն ներքին արդյունքը): Իսկ տնտեսությունը նորամուծությունների ռեժիմի փոխադրելու համար Հայաստանը դիմուս ունի եթե ոչ բոլոր նախադրյալները, ապա դրանց մեծ մասը՝ զարգացած կրթական համակարգ, կրթված բնակչություն, ինտելեկտուալ և գիտական ներուժ, նորույթների որոշակի պաշարներ և այլն: Իսկ ոքան ժամանակը ձգվում է, այնքան ընկենում է այդօրինակ զարգացման ռեսուրսների որակը: Եվ եթե ստեղծված իրավիճում չկայացած ու թույլ մասնավոր ձեռնարկչությունն ի վիճակի չէ նորամուծությունների նկատմամբ պատշաճ պահանջարկ ձեւափորել, ապա դրանում որոշակի բացքողում ունի նաև պետությունը:

Ակնհայտ է, որ անցումային փուլում գտնվող երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, նորամուծությունների սահման ու արդյունավետ ընթացքը ապահովող իիմնական օղակը պետք է լինի պետական կառույցը: Նոյնիսկ ամենազարգացած երկրներում տնտեսության արդիականացման ռազմավարական ուղղությունների ձևավորման վրա պետությունը վճռորոշ ազդեցություն ունի, թեև մասնավոր նորարարական ձեռնարկչությունն ինքն է կրում նորացման հիմնական ծանրությունը: Յուրաքանչյուր կոնկրետ ձեռնարկատեր, ավելի ստույգ՝ կառավարիչ, ինքն է շարունակ մտահոգ, որպեսզի պատշաճ մրցունակություն ունենա, այլապես նորույթների ներդրման մեջ առավել հաջողակ մրցակիցները, ի վերջո, նրան դուրս կմղեն շուկայի իր զբաղեցրած հատվածներից:

Ընդհանուր առմամբ, նորամուծությունների արդյունավետ ներակառուցվածքի ստեղծման համար տևական ժամանակ է անհրաժեշտ: Զարգացած երկրներում նման ներակառուցվածքների ստեղծման վրա ծախսվել է 10-15 տարի<sup>18</sup>: Հայաստանում նորամուծությունների ներակառուցվածքների որոշ տարրեր ձևավորվել են դեռևս ԽՍՀՄ օրոք, օրինակ՝ գիտահետազոտական ինստիտուտների և կոնսուլտորական-տեխնոլոգիական բյուրոների ցանցերը: Սակայն նախկին համա-

<sup>17</sup> Տես Վ.Գ. Զինօվ.՝ Ինտելլեկտуальныե ресурсы. Ինտելլեկтуальная собственность. Ինտելլեկտуальный կапитал. Մ.: АНХ, 2000, с. 148.

<sup>18</sup> Տես նշվ. աշխ., էջ 57:

կարգից ժառանգված այս կառույցները միանգամայն անբավարար են: Ժամանակակից ինաստով նորամուծությունների արդիական ենթակառուցվածքներ ձևավորելու համար զգալի ռեսուրսներ ու հետևողական ջանքեր են անհրաժեշտ ինչպես միկրո, այնպես էլ մակրո մակարդակների վրա:

Բնականաբար, արդյունավետորեն գործող և միջազգային շափանիշներով նրանունակ նորամուծային ենթակառուցվածքի ստեղծումը բարդագույն խնդիր է, սակայն, լուծման առումով, բոլորովին էլ՝ ոչ անհնար: Պարզապես նման կառույցի ձևավորման առաջարքանքը պետք է դրվի պետության տնտեսական քաղաքականության առաջնահերթությունների շարքում: Մեզանում տեղեկատվական տեխնոլոգիաների հիմքի վրա տեխնոպարկ ստեղծելու բավականին երկշուր փորձեր են արվում, որի շրջանակներում պետք է ձևավորվեն ոչ միայն նորամուծությունների ստեղծման, այլև ուսումնական ենթակառուցվածքներ: Հատկապես այս վերջին խնդիր լուծումը հույժ կարևոր է, քանի հաճախ մեզանում ոչ թե նորույթների, այլ դրանց նյութականացման-առևտրականացման ծրագրերի կառավարիչների պակաս է զգացվում:

Հայաստանյան արդյունաբերական ձեռնարկությունների դիտարկումները ցույց են տալիս, որ նորամուծությունների տարրեր պարունակող արհեստավարժ կառավարում իրականացվում է յուրաքանչյուր 18-20 ձեռնարկությունից լավագույն դեպքում մեկում: Ընդ որում՝

ա. արտադրանքի կատարելագործմանն ուղղված նորամուծությունը, որպես կանոն, իրականացվում է հարկադրաբար՝ առանց հաշվի առնելու շուկայի պահանջները,  
թ. նոր արտադրանքի ստեղծմանն ուղղված նորամուծությունները, որպես կանոն, իրականացվում են պատահաբար՝ ձեռնարկությունների առաջին դեմքների սուրյեկտիվ ընկալումների արդյունքում, իսկ նման ձեռնարկների մեջ ներդրված գումարների փոփսիատուցման ռիսկերի լուրջ գնահատում չի արվում,

զ. ձեռնարկությունների գերակշիռ մասը, որոնք այս կամ այն շարժառիթներից ելնելով՝ դիմում են նորամուծությունների, դրանք իրականացնում են՝ առաջին հերթին նպատակ ունենալով լուծել սույն գոյատևման խնդիրները. նոյնիսկ արտադրանքի դիմքսիֆիկացիայի (բազմազանեցման) դեպքում այդ նպատակից շեղում չի արվում:

Տարաբնույթը ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մեր ձեռնարկությունների ճնշող մեծամասնության համար նորամուծություններ պարունակող ռիսկային նախագծեր իրազործելու զիսավոր խոշընդոտը կոչտ բյուջետային սահմանափակումներն են: Ձեռնարկությունների 90 տոկոսի դեպքում նման սահմանափակում վստահաբար առկա է: Իսկ «հաջողակ» ձեռնարկությունների մնացած 10 տոկոսի դեպքում, եթե նորամուծություններ, այնուամենայնիվ, արվում են, այդուհանդերձ, դրանք ոչ մեծ ռիսկերի հետ են կապված: Արդյունքում ներդրվում են ոչ թե ուղղավարական առումով ամենից հետաքրքիր ու արմատական նորամուծությունները, այլ նրանք, որոնք ֆինանսավորման հնարավորություններ ունեն: Պատճառն այն է, որ նման ձեռնարկությունների համար նորամուծությունների ֆինանսավորման հիմնական միջոցները սեփական աղբյուրներն են ու թնավ էլ՝ ոչ արտաքին փոխառու միջոցները: Այստեղ խնդիրն այն է, որ մասնավոր բանկերի համար ռիսկային նորամուծությունների երկարաժամկետ վարկավորումը բոլորովին ձեռնտու չէ:

Կա նաև մեկ այլ, թերևս, որոշիչ պատճառ. նորամուծություններ պարունակող ծրագրեր ունեցող ձեռնարկատեր-սեփականատերերը հաճախ չեն ցանկանում դի-

մել մասնավոր բանկերի վարկավորմանը՝ վախտենալով, որ ձեռնարկի ծախողման դեպքում ստիպված կլինեն նրանց փոխանցել իրենց ողջ կարողությունը: Այս պայմաններում նորամուծությունների սուբյեկտները ստիպված են նորամուծությունների ֆինանսավորման այլ աղբյուրներ որոնել: Այդպիսիք կարող են լինել այն կառույցները, ովքեր կցանկանան նորույրի սեփականատիրոջ հետ կիսել ներդրման ռիսկը: Որպես այդպիսին կարող են հանդես գալ վենչուրային հիմնադրամները, արտադրող ընկերությունները և այլն:

Առաջարկ թերևս, ներկա պայմաններում անհրաժեշտ են ոչ միայն ֆունկցիոնալ, այլև կառուցվածքային ու կազմակերպական լուծումներ, որոնք ինչ-որ կերպ կմեղմեն ֆինանսական կոչտ սահմանափակումները: Տեխնոլոգիական նորամուծություններին միտված ֆինանսական միջոցների «կրիտիկական զանգված» ձևավորելու համար պետությունը պետք է խրախուսի ձեռնարկությունների միավորումը խոշոր հոլդինգների մեջ: Հոլդինգը՝ որպես ձեռնարկությունների և գիտահետազոտական հաստատությունների բազմաճյուղ միավորում, ի վիճակի է զգայի նյութական, ֆինանսական և մարդկային ռեսուրսներ հավաքագրել՝ նորարարական բնույթի ընդհանուր նշանակության և մեծ ռիսկի հետ կապված նախազծեր իրականացնելու համար: Հոլդինգային ընկերության մեկ այլ տարատեսակ է ֆինանսարդյունաբերական խումբը, որը կարող է ներքին ռեսուրսների հավաքագրման հիման վրա դիվերսիֆիկացնել (բազմազանեցնել) նորամուծությանների ռիսկերը և երկարաժամկետ հատվածում ապահովել խմբի մրցունակությունը:

Նման ֆինանսարդյունաբերական խմբերի մեջ, ի տարրերություն հոլդինգների, կարող են ընդգրկվել նաև բանկային ու ֆինանսական հաստատությունները: Մյուս կողմից, տարրեր ձեռնարկությունների կապիտալների միավորում-խոշորացումը կարող է բանկային-վարկատու կազմակերպությունների մոտ վստահության լուրջ հիմքեր ստեղծել, ինչը երկարաժամկետ վարկեր ներգրավելու հիմնական նախապայմաններից մեկն է:

## Summary

### THE NATIONAL INNOVATION SYSTEM: in the context of the development challenges

*Atom Sh. Margaryan*

The problems of formation and development of the national system of innovation – one of the basic elements of modernization and development of the independent Republic of Armenia's economy - are analyzed in this article. The author considers the role and significance of the scientific and technological spheres in contemporary conditions and, as a whole, in the light of the problems of the development of the world economy.

It is noted that, the only possibility for the economy's reconstruction and hightening the level of competitiveness of the Republic of Armenia, which is in a great need of mineral and energy resources, is connected with substantial development of science and technology. For the solution of this problem, it is necessary to transfer economy to the newly introduced regime by the formation of the national newly established system, which is an organically integrated entity of science, technology and economy. It has the ability to create modern high technologies, new competitive commodities and services, which will guarantee the high level of the society's welfare und development.